№ 271 ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7 1908 ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7 № 271

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1909 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(37-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., եօթ և վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., մէկ ամսվանը 1 ռուբլի:

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամակադրոշմ:

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ (հին բաժանորդներից խնդրվում է ուղարկել նախկին տպագրված հասցէն):

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ջաւահիր Միրզաբէգեան, Աննա Ալէքսանդրովնա և Դաւիթ Բուղդանեան Աւան-Իւզբաշեանցները յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր թանգագին թոռան և վերջինները դստեր՝ Պարիզում վախճանված

Մարգարիտ Դաւթեան ԱՒԱՆ-ԻՒԶԲԱՇԵԱՆՑԻ

մարմնի հասնելը Թիֆլիս: Թաղումը տեղի կունենայ դեկտեմբերի 7-ին: Պատարագը կը սկսվի Վանքի աւագ եկեղեցում ժամը 10½-ին, իսկ յուղարկաւորութիւնը ժամը 12-ին, դէպի Վերայի հայոց հանգստարանը:

Ամբիծքը շաբաթ, երեկոյեան ժամը 6½-ին Վանքի եկեղեցում: 2—2

Ներսիսեան դպրոցի չքաւոր աշակերտներին նպաստող ընկերութեան Հիմնադիր Յանձնաժողովը

յայտարարում է, որ դեկտեմբերի 7-ին, կիրակի, առաւօտեան ժամը 11-ին դպրոցում կայանալու է ընկերութեան առաջին

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ,

որին հրաւիրվում են համակրող անձինք:

Ժողովի զբաղմունքի առարկաներն են.

1) Ընկերութեան հիմնադրութիւնը, 2) Նրա վարչական մարմինների ընտրութիւնը:

3—3 (ու. կ.) առ. Հիմնադիր Յանձնաժողով

Ա. Զ. Դ.

ԵՂԲ. ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆՆԵՐԻ ԵՒ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

(Նիկօլայեվսկի կամուրջի վրա, ՔԱՄՕՅԵՎԻ տանը № № 25—30)

Պատիւ ունի յայտնելու յարգելի գնորդներին, որ, ի նկատի ունենալով Մոսկվայի իր սեփական ֆաբրիկայում պատրաստված ՄԵԾԱՔԱՆԱԿ ԱՊՐԱՆՔԸ՝ ՄՕՏ 100,000 ՌՈՒԲԼՈՒ ԱՐԺՈՂ.—տղամարդկանց, կանանց, երեխաների և բոլոր հիմնարկութիւնների պաշտօնական ՊԱՏՐԱՍՏԻ ԶԳԵՍՏՆԵՐ, և նոյնպէս՝ ի նկատի ունենալով ընդհանրապէս առևտրի կանգ առնելը, ԳԼԽԱՒՈՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ կարգադրութեամբ

Դեկտեմբերի 1-ից ս. թ. սկսված է

խանութում գտնվող բոլոր ապրանքների համար—ձմեռային և ամառային սեզոնի

ՄԻՆՉԵՒ ՕՐՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՉԵՂԱԾ

ՄԵԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ

(29, 2, 7, 11, 14, 17, 21, 23, 24 դ. 4 յուն.) առ. 10—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Գեղարուեստ

Գրական, գեղարուեստական, երաժշտական
Պատկերազարդ հանդէս
ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԸ
Ճոխացրած ծաւալով և 5 գոյնի պատկերներով

Բաժանորդագրութիւնը շարունակվում է
10 գիրքը 10 ռ., 6 գիրքը 8 ռ., 4 գիրքը 5 ռ.
Հատավաճառ 2 ռուբլի
Դիմել Թիֆլիսի և Բագուի գրավաճառանոցները:
Խմբագրութեան հասցէն. Թիֆլիս, Бебутовская 12, կամ почт. ящ. 133.
Օտար տեղերից՝ Тифлисъ, редакція «Гехарвестъ», կամ Tiflis, Rédaction «Kegharvest».
3—3 (ա.) (ե. ու. կ.) Խմբ.-Հրատ. Գ. Լեոնեան

ՎՕԼԺՍԿՕ-ԿԱՄՍԿԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ բացվում է Թիֆլիսում յիշեալ բանկի բաժանմունք, որը կը սկսէ կատարել բանկի կանոնադրութեամբ թոյլատրված բոլոր օպերացիաները՝

սկսած դեկտեմբերի 10-ից:

(կ.) 1—1

Կիրակի, դեկտեմբերի 21-ին 1908 թ.
Յօգուտ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան
Կը ներկայացվի
ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Сельская честь

Առաջին անգամ Թիֆլիսում

Տօնածառ

Հեքիաթ 1 գործ. և 4 պատկերով
Երաժշտութիւն Վ. Ի. Ռեբիկովի

Այս պիէսան կը խաղացվի հեղինակի անմիջական հսկողութեամբ: Նոյն օպերայի համար պ. Նովակը պատրաստել է յատուկ դեկօրացիաներ նկարիչ պ. Թադէոսեանի էսկիզներով:

Առաջին անգամ Թիֆլիսում

ՆՈՒՌ ԵՒ ԱՆԻՏԱ

Ֆանտաստիկական բալետ 1 գ. 3 պատ.
Երաժշտութիւն Իլինսկու
Անտրակտներին կը լինեն՝
պարեր, ծիարշաւ եւ վիճակախաղ:

Սկիզբը երեկոյեան ճիշտ ժամը 8-ին
Մուտքը 2 ռ. 20 կոպ: Գալերկա 75 կոպ.

Ով ցանկանում է ունենալ համարագրած տեղեր պարտերում, ամֆիտէատրում և օթեակներում, նախօրօք կարող է իր տոմսակը փոխել Հայուհեաց Բարեգ. Ընկ. արհեստանոցում, Գանովս. № 19, ամեն օր առաւօտեան ժամը 10—2-ը, աւելացնելով պարտերի և ամֆիտէատրի համար իւրաքանչիւր տոմսին 1 ռ., օթեակի համար—6 ռ., կողքի բենուարների համար—3 ռ., իսկ 2, 3 և 4 յարկերի բալկոնների ու 2 յարկի կողքի օթեակների տոմսակները կարող են փոխարինվել առանց յաւելեալ վճարի:

(կ.) ա. 3—1

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ
ԱՐՏԻՍՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Երկուշաբթի, դեկտեմբերի 8-ին
Տիկին ՄԱՅՈՒՐԵԱՆԻ բենեֆիսին
Կը ներկայացնէ
Առաջին անգամ հայոց բեմի վրա

I

Ամուրիների ժողովարանը

Կոմ. 3 գ. Բալուցկու, Թարգ. Վ. Տիրայեանի

II

Անուրջ

Դրամ. 1 գ. Զուդերմանի, Թարգ. Վ. Տիրայեանի

Մասնակցում են՝ օր. տ. տ. Արաքս, Գուլազեան, Մայուրեան, Մելիքեան, Յասմիկ, պ. պ. Աւետեան, Զարիֆեան, Թաշճեան, Թորոսեան, Մամիկոնեան, Սեւումեան և Վանչիր:

Սկիզբը երեկոյեան ուղիղ ժամը 8-ին:
Տեղերի գները բենեֆիսային են:
Ռեժիսեոր՝ Ս. Քափանակեան

(ա.) 2—2

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄ

Ամիսներ շարունակ մենք կարդում էինք սպառնալիքներ այն բանի մասին, թէ Պետական Դումայի անդամների մի որոշ խումբ պատրաստվում է հարցապնդումներ անել Դումայում կովկասեան գործերի մասին:

Հարցապնդումը յետաձգվում էր, յետոյ նորից ասպարէզ մղվում, դարձեալ յետաձգվում: Իսկ սպառնալիքը մնում էր իբրև մի չարագուշակ ուրուական, որ պէտք է մի օր վերջապէս գար իր տպաւորութիւնը գործելու:

Ամիսներ յերկարվող հարցապնդումը վերջապէս տեղի ունեցաւ: Նրան առաջ մղեցին Պետական Դումայի 38 անդամ: Հարցապնդումը կրում էր մեղադրանքների բնաւորութիւն, որոնց կէտերին պէտք էր պատասխանել:

Եւ ահա բարօն Նոլդէն կովկասեան Փոխարքայի կողմից տուեց իր պատասխանը մի շարք բացատրութիւնների ձեւով, որոնք լոյս տեսան «Մշակի» երէկվայ համարում:

Այդ բացատրութիւնները նպատակ ունեն ցոյց տալու, որ Կովկասում չը կան քաղաքական-անջատական խմբեր, որ Կովկասի կապը Ռուսաստանի՝ և կովկասցիների կապը ռուս ժողովրդի հետ չէ կարող ոչ մի կասկածի տեղիք տալ, որ կովկասեան ոճրագործութիւնները չունեն հակառուսական բնաւորութիւն և որ առհասարակ գոյութիւն չունի հալածանք ռուս տարրի դէմ Կովկասում:

Այդ բացատրութիւնները և հերքումները, անշուշտ, չափազանց տարրական են մեզ կովկասցիներիս համար, և միայն զարմանալ կարելի է, որ Պետական Դումայի անդամների մէջ այնքան մեծ թւով անձեր կան, որոնք թիւր գաղափարներ ունեն կովկասեան գործերի մասին և անընդունակ են ըմբռնել մեր երկրի աւելի իրական, աւելի էական կարիքները, որոնց բաւարարութիւն տալով կարելի է բարձրացնել երկրի և ժողովրդի բարօրութիւնը, դարձնելով նրան միևնոյն ժամանակ մի երջանիկ մասը ամբողջ մեծ հայրենիքի:

Մեր երկիրը ծարաւ է բարենորոգումների և մեր ժողովրդի բանիմաց մասը անհամբեր սպասում է շինարար բեղմնաւոր ծրագիրների իրագործութեան, որպէսզի կարողանայ բարգաւաճել թէ իր սեփական բաղդաւորութեան համար և թէ ընդհանուր հայրենիքի յիշված երջանիկ մասը կազմելու համար:

Մենք դեռ կը վերադառնանք կովկասեան բարեկարգութիւնների խնդրին:

Ա. Քալանթար

ԱՅՍՕՐՎԱՅ ՅՈԲԵԼԵԱՐԸ

Այսօր տօնվում է վրաց բանաստեղծութեան հսկայ ներկայացուցիչ Ակակի Ծերեթելու յիսնամեայ գրական գործունէութեան յոբելեանը:

Ակակի Ծերեթելին յիսուն տարի շարունակ գործել է իր հարազատ և մեր դարաւոր հարեւան վրացի ազգի մէջ, երգելով իր հայրենի բնութիւնը, տունն ու տեղը և ժողովուրդը, արթնացնելով իր ազգի հոգեկան կրակը և աւիւնը, արտայայտիչ հանդիսանալով նրա ստեղծագործական ոգու թելադրութիւններին և արձագանք դառնալով նրա բանաստեղծական տրամադրութիւններին:

Քնարերգութիւնը պատուանդանն է այն փառքի, որ նա նուաճել է վրաց ժողովրդի սրտերում տասնեակ տարիներից ի վեր: Հոգու զեղմունքների անպաճոյճ պատկերացումներն են հիմքը այն սերտ կապի, որ շաղկապել է նրան իր ազգի զգացմունքների հետ բարոյական օղակներով:

Յիսնամեայ այդ փառաւոր գործունէութեան մէջ, գրական բազմաթիւ, գեղեցիկ գրուածքների մէջ կան նաև թոյլ կողմեր, կան վրիպումներ. բայց այսօր, երբ տաղանդաւոր բանաստեղծի գործունէութեան համագումարն է դրած մեր առաջ, երբ նրա երկարատև, ամբողջ յիսուն տարի շարունակվող ստեղծագործական աշխատանքի յոբելեանն է կատարվում, վրաց և ընդհանրապէս կովկասեան հասարակութեան համար թանգ է այն մեծագոյն գրական գանձը գնահատել, որ նա տուել է իր ժողովրդին, նուիրելով նրան իր ամբողջ հոգեկան էութիւնը և իր բոլոր մտածողութիւններն ու զգացմունքները:

Եւ մենք ջերմ կերպով ողջունում ենք նշանաւոր քնարերգուի բեղմնաւոր յոբելեանը և շնորհաւորում ենք մեր հարեւան վրաց ազգը, որ նա յիսուն տարվայ յոբելեան կատարող այնպիսի մի պարծանք ունի, ինչպէս է Ակակի Ծերեթելին:

Ա. Ք.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 3 դեկտեմբերի

Գահաժառանգը, շքախմբի ուղեկցութեամբ, ուղևորվելու է այցելութիւն տալու եւրոպական պետութիւններին:

Ներքին գործերի մինիստրութիւնը խորհրդակցութիւն է գումարել միջոցներ որոնելու աւստրիական ապրանքների դէմ սկսված բոյկոտին վերջ տալու նպատակով: Վաճառական պատգամաւորները յայտնել են, որ բոյկոտը կարելի է վերջացնել երկու ժամվայ ընթացքում, եթէ Աւստրիան զիջումներ անի: («Кс.»)

Բեռլին, 5 դեկտեմբերի

«Կաբէլ-Գրամմ-Գեզէլշաֆտ»-ին հեռագրում են Կահիրէից, որ թիւրքական պարլամենտի բացումը տօնվեց ամբողջ Եգիպտոսում: Խդիվի կարգադրութեամբ՝ Կահիրէում, Պորտ-Սայիդում և Ալէքսանդրիայում պարպվեցին մի քանի թնդանօթներ: («Հ. Գ.»)

Բէլգրադ, 5 նոյեմբերի

Սկուպշչինան շնորհաւորական հեռագիր է ուղարկել թիւրքական պարլամենտին: («Հ. Գ.»)

Լօնդօն, 5 դեկտեմբերի

Երէկ, լօրդերի պալատի նիստում, Հնդկաստանի ստատս-սեկրետար Մորլէյ մանրամասն բացատրութիւն տուեց Հնդկաստանի իրերի և նախագծվող բարենորոգումների մասին: Նա մատնանշեց խժդժութիւնները ճնշելու անհրաժեշտութիւնը: Մորլէյը նաև ասաց, որ բնաւ չէ աշխատում Հնդկաստանում պարլամենտական սիստեմ մտցնել. Նախագծվում է սոսկ գաւառական ընտրողական խորհուրդներ հաստատել և գաւառական խորհուրդների կազմը ուժեղացնել: Անգլիայի հեղինակութիւնը Հնդկաստանում աւելի հաստատ կը լինի, եթէ Անգլիան յենվի հէնց հնդիկների աջակցութեան վրա: («Հ. Գ.»)

Պարիզ, 5 դեկտեմբերի

Ֆրանսիան և Սպանիան յանձնեցին Ալժէզիրասի արձանագրութիւնները ստորագրող մեծ պետութիւններին հանդիսաւոր այն նօտան, որ վերաբերում է Մուլէյ-Հաֆիդին սուլթան ճանաչելու ձևականութեան: («Հ. Գ.»)

Հաագա, 5 դեկտեմբերի

Արտաքին գործերի մինիստրութիւնը արժանահաւատ չէ գտնում այն տեղեկութիւնը, թէ Վենեցուելան պատերազմ է յայտարարել Նիդերլանդիային: («Հ. Գ.»)

Հռոմ, 5 դեկտեմբերի

Այսօր տեղի ունեցաւ դեսպան Մուրավիեվի մարմնի հանդիսաւոր թաղումը: Ռուսաց եկեղեցում թաղման կարգը կատարելուց յետոյ, սգահանդէսը դիմեց գերեզմանատուն քաղաքային գվարդիայի նուագածուների խմբի, զօրքերի և դրօշակների ուղեկցութեամբ: Դիակառքի երկու կողմերով գնում էին մինիստր Տիտտոնին, սենատի նախագահը, պատգամաւորների պալատի փոխ-նախագահը, աւստրո ունգարական դեսպանը, շվէդական դեսպանը, քաղաքապետը և պալատական արարողապետը: Դագաղին հետևում էին հանգուցեալի այրին երեխաներով և ազգականները, թագաւորի ներկայացուցիչ գեն.-ադ. Բրուզատի, պալատական բարձր պաշտօնեաները, մինիստրները, սրանց օգնականները, գեներալ-շտաբի, զօրքի և նաւատորմի ներկայացուցիչները, ռուսաց էսկադրայի օֆիցերները, դիպլոմատիական մարմնի անդամները, բարձր հասարակութեան և ռուսական գաղութի ներկայացուցիչները։ Դիակառքը թաղված էր պսակներով։ Հռոմի զօրաբանակի զօրքերը կանգնած էին ամբողջ ճանապարհին երկշարք, իսկ նրանց ետևում խռնված էր ամբոխը։ Ցերեկվայ ժամը 2-ի մօտերը սգահանդէսը հասաւ Տեստաչչիօ գերեզմանատունը։ («Հ. Գ.»)

Հռոմ, 5 դեկտեմբերի

Լրագիրները ընդարձակ յօդուածներ են նուիրում Մուրավիեվի թաղման նկարագրութեան և ցաւ են յայտնում նրա մահվան առիթով։ («Հ. Գ.»)

Բեռլին, 5 դեկտեմբերի

Կազաբլանկի մինչդէպի առիթով ընտրված միջնորդ դատարանը նախագահ է ընտրել Հաագայի միջնորդ դատարանի նախագահ շվեդացի Համմարշելդին։ («Հ. Գ.»)

Ամստերդամ, 5 դեկտեմբերի

Առևտրական պայմանագիր ստորագրվեց Նիդէրլանդիայի և Շվէցիայի միջև։ («Հ. Գ.»)

Բեռն, 5 դեկտեմբերի

Դաշնակցական ժողովը ընտրեց վերստին եօթ նախկին դաշնակցական խորհրդատուներին։ Դաշնակցութեան նախագահ 1909 թւի համար ընտրվեց բժիշկ Դեյխէրը։ («Հ. Գ.»)

Վիէննա, 5 դեկտեմբերի

Պատգամաւորների պալատ։ Չեխական սօցիալ-դեմօկրատների պարագլուխը բողոքում է, որ աննեկսիան տեղի ունեցաւ առանց ազգաբնակութեանը և հաստատութիւնների ներկայացուցիչներին հարցնելու և մատնանիշ է անում աննեկսիայի քաղաքական և տնտեսական վնասակար հետևանքների վրա։ Աննեկսիայի խրկական մեղաւոր նա համարում է արքեպիսկոպոս Շտադլերին, որը նրանից սպասում է ուժեղ աջակցութիւն կաթօլիկական շահերին։ Հռետորը մատնանշում է, որ անհրաժեշտ է Աւստրիային մասնակցել կօնֆերենցիային, որպէսզի պատերազմի երկիւղը հեռացվի բոլոր միջոցներով։

Չեխական սօցիալիստ-նացիօնալիստ Կլօֆակը ասում է, որ Աւստրիայի դրութիւնը փոխվեց 1866 թւից մինչև 1878 թ.։ Մասսաների ազգային ինքնագիտակցութիւնը ամրացել է։ Այլևս Աւստրիայի համար անհնար է իր գերմանացի զինուորներին ուղարկել պրուսացիների դէմ, նոյնպէս անմիտ բան է չեխ, սլաւօն և խօրվատ զինուորներին ուղարկել ռուսների և միւս սլաւօնների դէմ։ Մեր լօզունգն է՝ «Ոչ մի տերրիտօրիալ անդաղտնապահութիւն (экспансивность) Բալկանում, բայց բալկանեան պետութիւնների վրա տնտեսական ազդեցութեան տարածում»։ Դա հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ Աւստրիան ձեռք կը բերէ բալկանեան սլաւօնների համակրութիւնը։ Սկզբի համար թող Աւստրիան ուշադրութեան առնէ Սերբիայի և Չերնօգօրիայի արդարացի պահանջները, թող նա չը հակառակէ, այլ աջակցէ ստեղծելու բօլգարական պետութիւնների կօնֆերենցիա։ Մաքսային դաշնակցութեան մէջ Աւստրիայի ապագան ապահովված է, բայց Գերմանիայի հետ դաշնակցութիւն կապելը Աւստրիային սպառնում է ներքին խռովութիւններ և անկում։ Պան-գերմանական կուսակցութիւնը յայտնում է, որ բոլոր գերմանացիները դատապարտում են աննեկսիան, բարոն Էրենտալի արկածի քաղաքականութիւնը։

Սերբիական նացիօնալիստ Բալիակ ընդգծում է բոլոր սերբերի համերաշխութիւնը և ասում է, որ բօսնիական սերբերը ևս առաւել հոգ են տանում իրանց ապագայի մասին, որ աննեկսիայի գաղափարը պաշտպանվում է յանուն պան-գերմանիզմի, ուստի և պաշտպանվում է եռանդուն կերպով գերմանական դիպլօմատիայի ձեռքով, անգամ գերմանական զօրքի կողմից։

Վիճաբանութիւնների շարունակութիւնը նշանակվեց դեկտեմբերի 4-ին։ («Հ. Գ.»)

Վիէննա, 5 դեկտեմբերի

Չեխիայում և Մօրավիայում չեխերի բօյկօտը գերմանացիների դէմ սաստկանում է, ընդունելով սիստեմատիկ կերպարանք։ Դա վկայում է մինիս. նախագահ Բինէրտը լրագիրներում տպած դիմումի մէջ արդարադատութեան մինիստրին, որին առաջարկված է եռանդուն միջոցներ ձեռք առնել։ Պրագայում երէկ և այսօր գրաւվեցին գլխաւոր լրագիրների այն համարները, որոնց մէջ տպված էին յօդուածներ գերմանացիների դէմ. նաև գրաւվեցին չեխական 20 լրագիրներ։ («Հ. Գ.»)

Վիէննա, 5 դեկտեմբերի

Պատգամաւորների պալատը, ընդունելով հերթականութիւնը, աննեկսիայի օրինագիծը և քննվող առաջարկութիւնները յանձնեց 52 հոգուց բաղկացած մասնաժողովին։

Վիճաբանութիւնների ժամանակ Պրամարժը յայտնեց, որ նէօսլաւիզմը հետամուտ է մի նպատակի, որ տրամագծօրէն հակադիր է պանսլաւիզմին։ Եղբայրութիւնը և ազատութիւնը նէօսլաւիզմի հիմունքներն են։ Նա աշխատում է ամենից առաջ ռուսների և լեհերի եղբայրացման համար։ Նէօսլաւիզմի շարժումը գաղափարական է, նա ձգտում է ազդել քաղաքականութեան վրա։ Եթէ նէօսլաւիզմին աջողվի ռուս քաղաքականութիւնը ուղղել իր սկզբունքների ոգով, նա անհագին ծառայութիւն կը մատուցանէ ոչ միայն սլաւօնական աշխարհին, այլ նաև հանուր մարդկութեան։

Ֆրանց-Յոսէֆ կայսրը առանձին ունկնդրութեան ընդունեց իտալական դեսպան դուքս Ավարնին, որ կայսրին յանձնեց իտալական թագաւորի պատասխան-նամակը աննեկսիայի մասին տեղեկութիւն տալուն դիմաց։ («Հ. Գ.»)

Վիէննա, 3 դեկտեմբերի

Լուրերի համաձայն, Գերմանիան խորհուրդ է տուել Աւստրիային շահագրգռված պետութիւններին ամեն տեսակ խորհուրդներ տալ, նրանց մէջ տարաձայնութիւններ ձգելու պատրւակով։ («Кс.»)

Վիէննա, 5 դեկտեմբերի

Յետագայ վիճաբանութիւնների ժամանակ պատգամաւորների պալատում Բօսնիայի և Հերցեգօվինայի երկրակցութեան առաջարկի անյետաձգելիութեան մասին Բինէրտը յօյս յայտնեց, որ Թիւրքաց պետական գործիչները այժմ, Բօսնիայի վերաբերմամբ բանակցութիւնները վերսկսելով, կը գան այն համոզման, որ Թիւրքիայի շահերը Բալկաններում չեն կարող աւելի լաւ ապահովված լինել՝ քան Թիւրքիայի ու Աւստրօ-Ունգարիայի համաձայնութեամբ։ Համաձայնութիւնից օգուտ կը քաղէ նաև միջազգային կօնֆերենցիան, որի գումարումը Աւստրօ-Ունգարիան համարում է անպայման ցանկալի և նրա իրագործման համար կանէ ամեն բան։ Աւստրօ-Ունգարիայի կողմից կօնֆերենցիայի մասնակցութեան միակ պայմանը այն է, որ լիակատար համաձայնութիւն լինի ծրագրի նկատմամբ բոլոր պետութիւնների միջև։ Մինիստրը յօյս ունի, որ աւստրօ-թիւրքական համաձայնութիւնը խաղաղացնող ներգործութիւն կունենայ դէպի Աւստրիան ունեցած Սերբիայի և Չերնօգօրիայի թշնամական տրամադրութեան վրա։ Հաստատակամութեամբ պաշտպանելով իր շահերը, աւստրօ-ունգարական կառավարութիւնը ամեն ջանք գործ կը դնէ խաղաղութեան մեծ բարօրութիւնը պահպանելու համար։

Երեկոյեան լրագիրները ողջունում են Բինէրտի ճառը, որով նա կառավարութեան պատրաստականութիւնն էր յայտնում բարդութիւնների խաղաղ լուծմանը ընդառաջ գնալու համար։ «Neue Fr. Presse» լրագիրը ողջունում է այն ուրախալի նորութիւնը, որ կառավարութիւնը առաջին անգամ հանդէս է գալիս աւստրիական միջազգային հարցերի առիթով։ («Հ. Գ.»)

Վիէննա, 5 դեկտեմբերի

Պատգամաւորների պալատում այսօր ևս շարունակվեց աննեկսիայի օրինագիծը հերթական ընդունելու առաջարկութեան քննութիւնը։ («Հ. Գ.»)

Փարիզ, 5 դեկտեմբերի

Սաիդից հաղորդում են, որ օտարերկրեայ լեգիօնի փախստական զինուորների առաջնորդը, որ յարձակում էր գործել գեներալ Վիժիի գնացքի վրա, բռնված է Մարխոմի տիրապետութեան շրջանում և յանձնված ժանդարմներին։ Տեղեկի մօտերքում ժանդարմների զօրամասը բռնել է օտարերկրեայ լեգիօնի ուրիշ 5 փախստականներին ևս, որոնք մասնակցութիւն չեն ունեցել գնացքի վրա գործված յարձակման մէջ։ («Հ. Գ.»)

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, սրանից մի քանի օր առաջ Բագւում գերի էր ընկել շանտաժիստների ձեռքը տեղական հարուստ ընտանիքներից մէկի, այն է՝ Սերգէևի որդին, որի ազատութեան համար պահանջվում էր մեծագումար փրկանք։

Երէկ ստացանք Գարադաշից հեռագիր, որ հաղորդում է, թէ Սերգէևի որդին արդէն ազատված է։

Ռոստով Դ/Վ., 5 դեկտեմբերի

Պարզվեց, որ գնացքների ընդհարման ժամանակ վիրաւորվել են 22 հոգի։ («Հ. Գ.»)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պօլիս, 25 նոյեմբերի

Աւստրիական ապրանքներու դէմ բօյկօտաժը կը շարունակուի. եղած ցոյցերը ահագին համեմատութիւններ կառնեն։ Երեք օր առաջ 3—4000 ստորագրութիւններով լեցուն հանրագրութիւնով մը՝ ուր միացած են Մարմարայի, Սև ծովի, Արշիպեղագոսի նաւահանգիստներու, շոգեկառքի բոլոր գլխաւոր կայարաններու նաւավարներն ու բեռնակիրները, համաձայն մայրաքաղաքի մէջ գտնուած իրենց արուեստակիցներուն, ամէնքն ալ, թիւրք, յոյն և հրեայ, կը բողոքեն Աւստրիոյ գործ դրած անիրաւութեանցը դէմ, հաստատապէս ուխտադիր եղած են բնաւ ձեռք չդպչել աւստրիական ապրանքներու, ոչ շոգենաւերէն ցամաք փոխադրելու, ոչ շալկելով տեղէ տեղ տանելու։

Բեռնակիրներու խումբ մը, հինգ-վեց հարիւրէ բաղկացած, ման եկաւ Պօլսի գլխաւոր փողոցներու մէջ, թմբուկներով և փողերով, կանգ առաւ գլխաւոր պաշտօնատուններու, խմբագրատուններու առջև, կեցցէներով, ծափերով իր ցոյցերը շարունակեց։ Տեղական թերթերը, հետևեալ առաւօտուն, նկարագրելով այդ բեռնակրային ցոյցերը, հրատարակեցին այդ նոր բօյկօտաժի պատմութիւնը։

Ինչպէս ինքնին մակաբերելի է, աւստրիական վաճառատուները խոշոր վնասներու մէջ են. անոնց վարիչները, ծանր իրողութեանց առջև նկուն և մտածկոտ, չեն կրնար նոր ճամբայ գտնել։ Աւստրիական կառավարութեան կիյնայ իր երկրին առևտրական վնասներուն համար արտաքոյ կարգի դարման մը խորհիլ։ Թերթերու մէջ հրատարակուած լուրի մը նայելով, պիտի ջանայ բան մը ընել։

Մինչև որ Աւստրիան յաջողի բան մը ընել, բօյկօտաժը, եղածներէն դառնելով, պիտի շարունակուի. մեր խանութպանները առիթ պիտի ունենան դրամի վերածելու իրենց թափթփուկ ապրանքները, որոնք տարիներէ ի վեր կը սպասէին դարաններու մէջ, փոշիներու տակ։ Շաքարը հրապարակի վրայ բաւական թանկ գնով կը ծախուի. աղքատ դասակարգը ստիպուած է զանց ընել իր անուշեղէնի պէտքերը։

Երեսփոխանական ժողովը, իր վերջին նիստին մէջ (21 նոյ.), զբաղեցաւ գաղթականներու Նպաստի հարցով։ Նոր յանձնախումբ մը, վարչութենէն ընտրուած, գանգատներ տեղաց Նպաստ ընդունող գաղթականներու ըմբոստ վարմունքի և ծուլութեանը դէմ։ Շատեր յանդգնած են պատրիարք սրբազանի դէմ պոռալ կանչելու։

Այդ վարմունքը երբեք չպիտի ուզեմ արդարացնել. ընդհակառակն՝ մեծապէս պախարակելով՝ պիտի ըսեմ, թէ, ինչպէս որ լաւ գիտուեցաւ յատենի ժողովին, տեղապահութեան օրով Նպաստի անհաւասար բաշխումները տեղի տուած են այդ դժգոհութեանց. եղած են գաղթականներ, որ Նպաստ ստացած են քանիցս անգամ՝ հագուստ և անուն փոխելով։ Եւ ինչ որ աւելի ցաւալի է, սա է, որ Նպաստին բաշխման գլուխը գտնուող պատրիարքարանի պաշտօնեաներ դիւրացուցած են այդ զեղծումները. թէ ի՞նչ դիտաւորութեամբ, ատ չգիտեմ։

Արդ՝ գաղթականներու այդ առանձնաշնորհեալ մասը երբ տեսաւ նոր յանձնախումբ մը որ կը գործէ օրինաւորապէս ու արդարապէս, փափագեցաւ նախկին դրութեան շարունակութեանը և, խոչընդոտ տեսնելով, չուզեց ընկրկիլ ու լրբացաւ պատրիարքին դէմ գոռալ գոչելու։ Նոր յանձնախումբը, լաւ գիտնալով շարժումներուն մէջ դրուած մեքենայութիւնները, յայտնապէս ամբաստանեց հին մասնախումբը, ըսելով թէ ան է որ գաղտնաբար շարժառիթ կըլլայ այդ յոռի խլրտումներուն։

Երուսաղէմի հարցն ալ, իր բոլոր տգեղութիւններովը, օրակարգի խնդիրներուն մէջ է։ Միաբանութիւնը, Քրիստոսի գերեզմանին բոլորտիքը ու անոր պահապանը իբրև ազգ. դարաւոր ժառանգութեան մը, գիրար կը բզկտէ. Յարութիւն պատրիարքը, իր ծերութեանը պատճառաւ, խաղաղութիւն չի գտներ իր ի Քրիստոս եղբայրակիցներու մէջ, իսկ աստին, մայրաքաղաքին մէջ, Ղևոնդ վարդապետ, վանքին ամենէն ճարտար գողը, որու համար կըսեն թէ ահագին գումարներ իւրացուցած է, գտած է իր պաշտպանները, իր փաստաբանները։ Իր ամբաստանողները չեն զարմանար թէ ինչպէս կը ջատագովուի այդ անխիղճ գողը 10—15 հազար ոսկիներու։ Հուն բառնէ մեղքը, ինչպէս կըսուի առակօրէն. սատանի չափ խելք ունի, կըսեն, և գողցած ոսկիներովը փառաւորապէս կը գտնէ իր գովաբանները։

Ճիշդը ասած, ինծի անծանօթ մըն է դեռ Ղևոնդն ու իր շուրջը յարուցուած գողութեան հարցը. միայն թէ տարիներէ ի վեր գիտեմ որ այդ ճարպիկ վարդապետը՝ Եգիպտոսի մէջ գտնուած վանքապատկան մէկ ընդարձակ գետինը, իր տեսչութեանը շնորհիւ, ծախել տուած է շատ չնչին գնով մը, մինչդեռ 50—60,000 օսմ. ոսկի արժողութիւն ունի եղեր։ Ասով սա կապացուցի որ գաղտնապէս համաձայնած է գնողներուն հետ, մաս մը վանքին բաժին հանելով, առիւծի բաժինը իր ազգականներուն անուանը փոխանցելով։

Ուրիշ կէտ մըն ալ, յայտնի բոլոր երեսփոխանութեան, սա է որ Իզմիրլեան, Երուսաղէմի բոլոր հարցերուն մօտիկէն գիտակ ու տեղեակ, Ղևոնդի և անոր կուսակցութեան համակիր չէ, ներքնապէս համոզուած ատոնց յանցապարտութեանը։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԱՆՈՒՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ

Այսօր ամբողջ վրաց ժողովուրդը և գրական աշխարհը տօնում է բանաստեղծ Ակակի Ծերեթելու յօբելեանը։ Վրացի ժողովուրդը, որ՝ համարում է նրան իր պարծանքը և փառքը, առանց համոզմունքների և կուսակցութիւնների խտրութեան, գնահատում և վարձատրում է այսօր իր մեծ ժողովրդական քերթողին։

Մենք հայերս, որ եղբայրակից ենք վրացիներին, դարերով ապրած լինելով իրար կողքի, դարերով կրած լինելով միևնոյն պարսկական, թիւրքական բռնապետական լուծը, որ զաւակներն ենք միևնոյն մեծ հայրենիքի, այսօր մեր բարոյական և եղբայրական պարտքն ենք համարում մեր շնորհաւորութիւններն և յարգանքն ևս միացնել վրացի ազգի շնորհաւորութիւններին և յարգանքին, ողջունելով Ծերեթելուն՝ իբրև տաղանդաւոր բանաստեղծի և ստեղծագործողի։ Եւ մենք այդ անում ենք յանուն ազգերի համերաշխութեան, յանուն եղբայրասիրութեան, մոռացութեան տալով այն վէրքերը, որ բանաստեղծ Ակակի Ծերեթելին երբեմն հասցրեց մեզ հայերիս, միանալով հայատեացների խմբին։ Ակակի Ծերեթելու այդ վարմունքը մենք համարում ենք մի ժամանակաւոր մոլորութիւն, որի մէջ նա ընկել էր յանուն իր ժողովրդի և ազգի սխալ հասկացված շահերի։

Վրացի բանքարաւոր բանաստեղծի գործունէութեան մէջ երևացած այդ պատահական ստուերը չէ կարող և չը պէտք է մի րօպէ անգամ կասեցնէ մեզ տալու այն յարգանքը, որին արժանի է ամեն մի քնար, որ երգել է իր անմխված. թշուառ ժողովրդի ցաւերը, տառապանքները, որ զարթեցրել է յոյսի, ուրախութեան, մխիթարութեան զգացումներ այդ տառապեալ ժողովրդի հոգու մէջ։

Մենք կատարում ենք այսօր մեր հանրամարդկային, եղբայրական պարտքը, մատուցանելով յարգանք վրաց ժողովրդական բանաստեղծ Ակակի Ծերեթելուն, տեսնելով նրա մէջ իբրև վրաց ժողովրդի ստեղծագործական-գեղարուեստական մտքի ներկայացուցչի, յանուն այն համերաշխութեան և եղբայրութեան, որ պէտք է ամբողջապէս կապէ հայերին և վրացիներին, իբրև միևնոյն երկրի քաղաքացիների։

Հ. Առաքելեան

ԱԿԱԿԻ ԾԵՐԵԹԵԼԻ *)

Պետերբուրգում Ակակիին ամենքը խորհուրդ էին տալիս մտնել զինուորական ակադեմիա, բայց այդ մթնոլորտը անտանելի թւաց նրան, թողեց զինուորական դառնալու միտքը և մտաւ Պետերբուրգի համալսարանի արևելեան ֆակուլտետը. բացի դրանից նա լսում էր նաև այդ ժամանակ յայտնի պրոֆեսոր Սպասովիչին, Կոստոմարովին, Կավելինին, Ստասյուլևիչին և ուրիշներին։ Ծանօթացաւ ռուս ուսանողութեան հետ. կազմեց շրջան. այդ ժամանակվայ ռուս գրականութեան համն ու հոտը առաւ և տարվեց վաթսունական թւականների հովերով։

Այս շրջանից սկսվում է Ակակիի գրական գործունէութիւնը, թէև դրանից էլ առաջ նա գրել էր իր հօր հարկահաւաքի գործած բռնութիւնների նկարագրութիւնը գիւղացիների վրա. դա մի տրագիկ-կօմեդիա էր, որը երբեմն խաղում էին. բայց այդ գրուածքը համարվում է նրա գրչի սկզբնական հանքը, որը յետոյ, երբ վերադարձաւ Պետերբուրգից, ինքն էլ չը հաւանեց և այրեց։ Նրա առաջին բանաստեղծութիւնը տպվեց «Ցիսկարի» («Արշալոյս») ամսագրի 1858 թ. նոյեմբերի համարում։ Այս ամսագրին էր աշխատակցում Պետերբուրգից և վերադառնալուց յետոյ էլ մի որոշ ժամանակ։ «Ցիսկարիից» յետոյ Ակակին աշխատակցում էր «Դրօէբա» լրագրին։ Այստեղ արդէն նա թողնում է բանաստեղծութիւնը և հանդէս գալիս որպէս հրապարակախօս. առօրեայ հարցերին արձագանք է տալիս և ուղղութիւն տալիս հրատապ խնդիրներին. Նա գրում էր «Տաք-տաք հարցեր» ընդհանուր խորագրի տակ և զարդարում էր ոտանաւորներով, կենդանի լեզուով պատկերացնում էր կեանքի հոգսերն ու դարդերը. Նրա գրածները կարդացվում էին մեծ հետաքրքրութեամբ։

60-ական թւականներին նա համարվում էր «Դրօէբայի» մշտական աշխատակից, բայց միևնոյն ժամանակ աջակցում էր նաև Ն. Աւալաշվիլու լրագրին, որտեղ ի միջի այլոց տպվեց Ակակիի «Ալէքսի» պօէման։

Ա. Ծերեթելին, իբրև ժամանակի գրական մի անձնաւորութիւն, աւելի մեծ դեր է խաղացել լրագրութեան մէջ. այդ երևոյթը նկատվում է և մեր մէջ, որ այս կամ այն լրագրի շուրջն էին խմբվում ժամանակի 5—10 ինտելիգենտ մարդիկ, քահանայ, բժիշկ, ինժեներ, ուսուցիչ, բանաստեղծ. դրանցից իւրաքանչիւրը մինչև իսկ իր մասնագիտութիւնը զոհել է յօգուտ լրագրի ծաղկման և տարածման. այդպէս էր և Ակակին. Նա եթէ զբաղվէր զուտ բանաստեղծութեամբ, որի մէջ անպայման տաղանդ ունի, աւելի մեծ երկեր կարտադրէր, քան այժմ. բայց նա իր ժամանակի մեծ մասը և իր ամենաթարմ ժամանակը՝ տրքնում էր այս կամ այն խմբագրատանը և հոգում էր նրա կանոնաւորման և նրա նիւթականի համար։

Եւ ահա 1858 թւականից սկսած մինչև օրս Ակակի Ծերեթելուն հանդիպում ենք ամեն տեղ, վրաց բոլոր ամսագրերում, օրաթերթերում. գրում էր թէ բանաստեղծութիւններ և թէ աւելի ընդարձակ պօէմաներ, դրամաներ, շատ կծու ֆէլիէտօններ, պատմական և ժողովրդական ամփոփ ուսումնասիրութիւններ և վէպեր։ Ունի բազմաթիւ թարգմանութիւններ Լերմոնտովից և Պուշկինից, թարգմանել է Մօլիէրի «Սկապէնի արարքները», «Ակամայ բժիշկ» և այլն։ Մի խօսքով նրա գրուածքներով ողողված է ամբողջ հայրենիքը։ Այդ բոլորից յետոյ նա մնացել է աւելի ժողովրդի երգիչ-բանաստեղծ. Նրա ոտանաւորներից շատերը երգվում են. Նա ունի ուրախութեան, վշտի, սիրահարական և մանաւանդ հայրենասիրական երգեր. Նրա քնարը միշտ երգել է իր ժողովրդի սրտից. այդ իսկ պատճառով Ակակին այժմ համարվում է ամենաժողովրդական մարդը, մանաւանդ Իմէրէթում, ուր շատերը իրանց որդոցը Ակակի անունն են տալիս։ Նրա բոլոր գրուածներով կարմիր թելի պէս անցնում է հայրենասիրութիւնը, որ մինչև իսկ նեղ հայրենասիրութեան է հասնում. երգել է Վրաստանի փառքը և ցաւով ու կսկիծով նկարագրել անմխիթար ներկան, և աղօտ կերպով նշմարվում է պայծառ ապագան։ Նրա գրական գործունէութեան ահագին մասը ուղղված է վրաց ճորտական կեանքին։ Արևմտեան Վրաստանում Ակակին այդ կողմից միակն է. նա չէ ունեցել մի նախորդ, որը այդ սարսափելի բռնութիւնների մասին մի ծպտուն հանէր։ Ակակին հէնց Պետերբուրգից սկսած և ապա այստեղ՝ հրապարակ հանեց Իմէրէթի վրացի իշխանների գեղխութիւնը, նրանց վայրագութիւնները, հալածանքն ու ճնշումը իրանց ստրուկների վերաբերմամբ. և այդ նա անում էր ոչ թէ միայն լրագրական բազմաթիւ յօդուածներով, այլ իր շնորհալի չափածոյ գրուածներով, ֆէլիէտօններով ու թատրոնական գրուածներով։ Կրկնում ենք՝ սա Իմէրէթի գիւղացիութեանը արել է անգնահատելի ծառայութիւն. սա քնից զարթեցրեց, սա սթափեցրեց ճնշված ու ընկճված շինական դասակարգը։

Այդպէս չէր Քարթլում և Կախէթում, ուր Ակակիին փոխարինում էին շատերը, որոնք ունէին իրանց նախորդները. այստեղ կային Իլիա Ճաւճաւաձէն, Ծոնքաձէն, Անտօն Փուրցելաձէն, Եակօբ Գօգեբաշվիլին և ուրիշները. մինչդեռ Իմէրէթում այդ ամբողջ գործի ծանրութիւնը վիճակված էր տանել Ակակիին, և նա տարաւ ամենայն արիութեամբ։

Ի հարկէ այդ ասպարէզում նա ունեցաւ բազմաթիւ և ուժեղ հակառակորդներ. մինչև իսկ իր ազգակից Ծերեթելի իշխանները ծաղրում էին նրան, որ յայտնի Ռօստոմ իշխանի որդին «մարդ չը դառաւ, այլ մի երգիչ, գիր գրող», և անպատւութիւն էին համարում Ծերեթելների մեծ օջախի համար։

Ակակին հէնց սկզբից շատերի ուշադրութիւնը գրաւեց. սկզբից երևում էր նրա փայլուն ապագան։ Երբ նրա մի ֆէլիէտօնը կամ ոտանաւորը ուղարկվում էր խմբագրատուն, ամենքը ուրախանում, կենդանանում էին, այդ համարը աւելի էր տպվում, որովհետև գիտէին, որ Իմէրէթից 10-եակներով պէտք է պահանջէին։

Երբ յայտարարվեց 1880 թւին, թէ Ակակին պէտք է աշխատակցի «Իվերիային», մի քանի օրվայ մէջ 1000 բաժանորդ գրվեց, իսկ երբ 1885 թւին Ակակին թողեց այդ թերթը՝ հազիւ թէ 200 բաժանորդ մնաց։ Ահա այսպիսի մեծ ոյժ էր այս կամ այն թերթի համար Ակակին։ Նա գրել է և բազմաթիւ մանկական թէ ոտանաւորներ և թէ պատմուածքներ։

Նա գրում է համով-հոտով, ճաշակով, նկարագրում է կենդանի, աշխոյժ և վառ լեզուով. մեծ հետաքրքրութեամբ են կարդացվում մինչև օրս նրա հին գրուածները։ Ակակին տեղական ռուս թերթերումն էլ տալիս է նոյն հետաքրքրական և սրամիտ ֆէլիէտօններն և գրուածները։

Ակակիի արժանիքներից մէկն էլ այն է, որ քաջ ծանօթ է իր ժողովրդի, մանաւանդ Իմէրէթի կեանքին. Նա լաւ գիտէ, թէ ինչպէս է ապրում իմէրէթցին, հաճարեցին, սածերէթլեցին, գուրիացին, մեգրելցին, սվանեցին և ափխազցին. գիտէ նրանց բնաւորութիւնը, սովորութիւնը, ընդունակութիւնը, աշխարհհայեացքը, նիստ ու կացը և վարք ու բարքը. քաջ գիտէ նրանց հետ վարվելու եղանակը և նրանց վրա ազդելու միջոցները։

Չենք կարող աւելի կանգ առնել և տալ նրա այս կամ այն գրուածքի վերլուծութիւնը։ Դա որքան ցանկալի, նոյնչափ և անիրագործելի է օրաթերթի էջերում, բայց, ինչպէս ուրիշ անգամ էլ, այժմ ևս առիթից օգտվելով շեշտում եմ, որ մենք — հայերս ու վրացիները — փոխադարձաբար շատ քիչ ենք հետաքրքրվում իրար կեանքով, իրար գրականութեամբ և մամուլով։ Որքան մենք մօտ ենք և որքան պատմական բաղդը մեզ շատ մօտ կապել է, նոյնչափ հեռու ենք իրարից և անծանօթ։

Խ. ք.

---

*) Տես «Մշակ» № 268.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Երևան, 1 դեկտեմբերի

Այժմ մեզանում օրվայ հարցը Թեմ. դպրոցի փակվելն է։ Ծխ. և Թեմ. դպրոցների հոգաբարձուների յանձնաժողովը որոշել էր երէկ, նոյեմբերի 30-ին, առաւօտեան ժամը 11-ին, Գայիանեան դպրոցում հոգաբարձուների ընդհ. ժողով կազմել Թեմ. դպրոցի երեք բարձր դասարանների դասադուլին վերջ տալու համար խորհրդակցելու։ Այդ հարցով հետաքրքրվողը շտապում էր ժողովատեղին լսելու այդ խառն ժողովի որոշումը։

Որոշեալ ժամին հաւաքվեցին 35 հոգաբարձուներից միայն 16-ը, իսկ ծնողներից և ժողովրդից բազմաթիւ։ Որովհետև հոգաբարձութեան անդամները կէսից աւելի պակաս էին, իսկ հետաքրքրվող հասարակութիւնը շատ, ժողովականները որոշեցին այդ ժողովը համարել մասնաւոր հասարակական ժողով։ Ժողովին նախագահ ընտրվեց պ. Վասիլ Եղիազարեանցը։

Ժողովը բացվելուց յետոյ յայտնեցին, որ աշակերտները ցանկութիւն են յայտնում անձամբ իրանց կողմից լուսաբանել դէպքը։ Հոգաբարձու պ. Յ. Արղութեանը նախ պատմեց դէպքի մանրամասնութիւնը և ապա կարդաց աշակերտների տուած բողոքը, հոգաբարձութեան և մանկավարժական խորհրդի որոշումը։ Այդ բացատրութիւնից պարզվեց, որ աշակերտները դիմել են հոգաբարձութեանը մի դիմումով։

Հոգաբարձութիւնը այդ տեսակ պահանջը դպրոցական կարգ ու կանոնին հակառակ համարելով և վտանգաւոր ուսումնարանի գործունէութեան՝ կայացնում է՝ առանց բողոքողներին լսելու՝ հետևեալ որոշումը.

«ա) Աշակերտական վերոյիշեալ անտեղի, կարգապահութեան գլխովին հակառակ և անպատշաճ դիմումի առիթով հոգաբարձութիւնը իր խորին վիշտն ու ցաւը յայտնելով՝ միաձայն որոշեց.—Նախ՝ աչքի առաջ ունենալով պ. Աղամալեանի 1½ տարվայ արդիւնաւոր պաշտօնավարութիւնը, այսօր և եթ հոգաբարձութեանս կատարեալ վստահութիւնն ու համակրանքը յայտնել տեսուչ պ. Աղամալեանին նրա շահաւէտ և արդասաբեր գործունէութեան համար յօգուտ դպրոցի առաջադիմութեան։

«բ) Վաղն և եթ, ամսիս 25-ին, առաւօտեան հոգաբարձական ամբողջ կազմով ներկայ լինել դպրոցում, խօսել յիշեալ դասարանների աշակերտների հետ, ցոյց տալ նրանց իրանց դիմումի անտեղիութիւնը և բուռն ոգով աշխատել համոզել նրանց յետ վերցնել այդ դիմումը, ներողութիւն խնդրել պ. տեսչից իրանց դատապարտելի վարմունքի համար և շարունակել իրանց դասերը։

«գ) Երբ հոգաբարձութեան ամեն տեսակ ջանքերն ի դերև ելնեն և աշակերտները յամառեն իրանց որոշման մէջ, չը ցանկանալով ենթարկվել դպրոցական կարգապահութեան, որի հետևանքը կարող է լինել նրանց դպրոցից դուրս գալը, այդ դէպքում ի կատար ածել հոգաբ. վճիռը՝ այն է ընդ միշտ արձակված համարել դպրանոցից գործադուլ անողներին կամ դասի չը յաճախողներին, պարտաւորեցնելով դպրանոցի ուսուցչական խմբին պարապելու նոյն դասարաններում այնքան աշակերտների հետ, որքան աշակերտ իւրաքանչիւր դասարանում մնացած կը լինի, անգամ եթէ մի դասարանում մնացած լինի մի աշակերտ։

«դ) Հոգ. վերոյիշեալ վճիռը յայտնել նոյն ժամին դպրոցի ուսուցչանոցում նոյն հարցի առիթով խմբված մանկավարժ. ժողովին, լսել նրա կարծիքը աշակերտների այդ օրինակ անհանդուրժելի արարքի մասին և մի անգամ ընդ միշտ վերջ տալ աշակերտական այդպիսի դատապարտելի դիմումներին»։

Մանկավարժական ժողովը կայացրել է միևնոյն օրը, միևնոյն ժամին հետևեալ որոշումը.

«ա) Այդօրինակ քայլերը դպրոցում անհանդուրժելի համարելով, խնդրել հոգ. ամենախիստ և կտրուկ միջոցների դիմել աշակերտութեան այժմեան դատապարտելի քայլի դէմ, որպէս զի ապագայում այլ ևս չը կրկնվեն այդօրինակ քայլերը, որոնք վնասում են թէ դպրոցի և թէ նրա մէջ կրթվող սերնդի կենսական շահերին։

«բ) Թէ բարոյապէս և թէ իրաւապէս պարտաւոր ենք պարապել մեր դասերը, որքան էլ աշակերտներ լինեն իւրաքանչիւր դասարանում, և այդ առիթով յայտնել մեր համակրանքը հոգաբ. արած որոշման համար։

«գ) Ժողովի կողմից միաձայն յայտնել տեսուչ պ. Աղամալեանին այդ դէպքերի առիթով ցաւակցութիւն և նրա գործունէութեան համար համակրանք ու վստահութիւն»։

Հոգաբարձութիւնը միանգամայն խոստովանեց, որ ըստ էութեան պիտի մտնէին աշակերտութեան գանգատի մէջ և յետոյ տային իրանց այդ որոշումը, որովհետև այդ դէպքում այլ ևս, ապագայում, կամայականութեան հարց աշակերտութեան կողմից չէր կարող լինել։ Հոգաբարձութիւնը խոստովանեց նաև, որ չէ գնացել տեսչի դասերը լսելու (խօսքս բացատրութեան մասին չէ)։

Ժողովականներից պ. Գրիգոր Տէր-Խաչատրեանը հարց տուեց, թէ արդեօք հոգաբարձութեան կազմը վճիռ կայացնելուց առաջ աշակերտութիւնից բացատրութիւն և փաստեր պահանջե՞ց թէ ոչ։ Հոգաբարձ. պատասխանեց՝ «ոչ»։ Պ. Սիրական Տէր-Մարտիրոսեանցի առաջարկին՝ թէ ինչու հոգաբարձ. նախքան վճիռ կայացնելը չը հարցրեց մանկավարժական ժողովի կարծիքը, այլ արեց այդ յետոյ,—սրան պատասխան չը տրվեց։

Աշակերտներից պ. պ. Նորայր Շահնազարեանը և Խաչատուր Սեղալբէգեանը մանրամասնօրէն բացատրեցին և ասացին իրանց ցաւը, և վերջը ասացին, որ եթէ իրանց խնդրի ձևը նպատակայարմար չէր, բայց խնդրել են, որ իրանց բողոքի էական մասը լսեն ու քննեն և յետոյ վճիռ կայացնեն։

Թէ ժողովականների և թէ ուսուցիչների կողմից շատ թեր ու դէմ կարծիքներ եղան։ Պ. Յ. Արղութեանը յայտնեց, որ տեսչի դասաւանդութեանը քանի որ ներկայ չեն եղել, պէտք է որ նոր ստուգէին և մտնէին այդ հարցի մէջ, որպէսզի կարողանային օրինաւոր վճիռ տալ, և այդ կարող էր մի ամիս ձգձգվել։

Թեմ. դպրոցի ուսուցիչներից մէկը լաւ նկատեց, որ հասարակութեան ընտրած պատգամաւորները հոգաբարձութեանը ընտրել են դպրոց կառավարելու և ոչ թէ իրաւունք են տուել փակելու։ Ժողովում հարց բարձրացաւ, թէ այս ժողովը ինչ վճիռ կարող է կազմել հոգաբարձութեան համար։ Երևաց, որ ժողովի ցանկութիւնն է համերաշխ կերպով հոգաբարձութեան հետ միջոցներ որոնել այս ցաւալի միջադէպը խաղաղութիւնով վերջացնելու և վերականգնելու դպրոցի նորմալ դրութիւնը ու խաղաղեցնելու ծնողների և ժողովրդի վրդովված յուզմունքը։ Այդ սկզբունքի հիման վրա ժողովը դիմեց վերջնական բանաձևի, և երկար վիճաբանութիւնից յետոյ կանգ առաւ հետևեալ երկու բանաձևերի վրա.

ա) Հիմնվելով հոգաբարձութեան անդամներից մի քանիսի տուած բացատրութեան վրա, առաջարկել Թեմական դպրոցի կազմին չը գործադրել իր վճիռը և անմիջապէս քննութեան ենթարկել ըստ էութեան աշակերտների գանգատը և նոր արդար վճիռ կայացնել։ Իսկ մինչև այդ ժամանակը աշակերտներին պարտաւորեցնել կանոնաւոր յաճախել դպրոց։

բ) Առաջարկել պ. Աղամալեանցին, որ նա չը յաճախի դպրոց մինչև քննութեան վերջը։

Մի քանիսը ասացին. «Մենք համոզված ենք, որ պ. Աղամալեանը իրան այլ ևս չի թոյլ տայ յաճախել դպրոց մինչև քննութեան վերջը»։

Պ. Ալէքսանդր Հասան-Ջալալեանը առաջարկեց ընտրել մի յանձնաժողով՝ քննութիւն կատարելու այդ առիթով և գործը վճռելու։ Պ. նախագահը առաջարկեց թողնել այդ ընտրութիւնը հոգաբարձութեան և աշակերտներին, ինչպէս որ եղաւ 1905 թւին նոյն դպրոցում և խաղաղութեամբ վերջացաւ։ Ժողովը միաձայն որոշեց ընդունել առաջին առաջարկը, և ընտրեց յանձնաժողովի անդամներ հետևեալ անձնաւորութիւններին՝ պ. պ. Գ. Տէր-Խաչատրեանցին, Ա. Հասան-Ջալալեանցին և Ս. Տէր-Մարտիրոսեանցին, որպէսզի դրանք քննեն և վերջ տան ներկայ կնճռոտ հարցին։

Գ. Աղաղաղեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 5 դեկտեմբերի

27-դ նիստը բանում է իշխ. Վոլկոնսկին։ Շարունակվում են նոյեմբերի 9-ի օրէնքի երկրորդ մասի վիճաբանութիւնները։

Մինիստրների օթեակում նստած են մինիստրների խորհրդի նախագահը, հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարիչը, ներքին գործերի մինիստրի օգնական Լիկոլինը։

Վիճաբանութիւնները առաջվայ նման ծանրանում են այն հարցի վրա, թէ սեփականութեան ո՞ր տեսակին—անհատական թէ ընտանեկան — հարկաւոր է նախապատուութիւն տալ։

Ի պաշտպանութիւն ընտանեկան սեփականութեան հանդէս են գալիս աջակողմեանները. Տիմօշկինը, չափաւոր աջակողմեան Պօպօվ 4-րդ, հոկտեմբերեան Ֆաֆորսկի, աշխատաւորական Կրօպօտօվ։

Անհատական սեփականութեան միտքը պաշտպանում է գիւղացի հոկտեմբերեան Ալէքսանդրօվ։

Մի մեծ ճառ է արտասանում կոմս Բոբրինսկի 2-րդը։ Նրա ճառի ժամանակ մի ժամով յայտարարվում է ընդմիջում։

Նիստը վերսկսվում է ժամը 2 և 5 րոպէին։ Կոմս Բոբրինսկին շարունակում է իր ճառը, որ յաճախակի ընդհատվում է կենտրոնի ծափահարութեամբ։ Նա վերջում յայտնում է, որ իր ֆրակցիան միաձայն որոշել է ինչպէս մի մարդ ձայն տալ երկրորդ յօդուածի համար։

Սաղաթէլեանը յայտնում է, որ աշխատաւոր խմբակը, բողոքելով բռնութիւն գործադրելու դէմ, ձայն կը տայ երկրորդ յօդուածի դէմ, պաշտպանելով ընտանեկան սեփականութեան սկզբունքը (ծափահարութիւն ձախակողմից)։

Մինիստրների խորհրդի նախագահը, իբրև ներքին գործերի մինիստր, ասպարէզ է գալիս մի երկար ճառով ի պաշտպանութիւն անհատական սեփականութեան։

Ընդունվում է 4 ժամից յետոյ նակազը այլևս չը քննել, իսկ շարունակել նոյեմբերի 9-ի օրէնքի երկրորդ յօդուածի քննութիւնը։

Ժամը 3 և 45 րոպէին յայտարարվում է դադար։

Նիստը վերսկսվում է ժամը 4 և 7 րոպէին։ Նախագահում է Խոմեակովը։

Բակլակովը, պաշտպանելով ընտանեկան սեփականութիւնը, մտածում է, որ երկրորդ յօդուածը հակասում է գործող գիւղացիական կանոններին։

Լունինը կարծում է, որ երրորդ ազնւական Դուման ցանկանում է ստեղծել մանր հողային սեփականութիւն, որպէսզի աւելի դիւրին կերպով պաշտպանէ կալուածատիրական հողերը ստիպողական գրաւումից, բայց դրանից կալուածատէրերը վաղ թէ ուշ պէտք է իրանց հողերը յանձնեն գիւղացիներին (ծափահարութիւն ձախակողմում)։

Դմիտրիւկովը մի երկար ճառով առարկում է Բակլակովի բերած փաստերի դէմ և իրան կողմնակից է յայտարարում անհատական սեփականութեան։

Բարօն Մէյէնդորֆը ասում է, որ ինքը 20 երկար և ձիգ տարիներ ուսումնասիրել է հողային օրէնսդրութիւնը և այդ ուսումնասիրութիւնից գալիս է այն եզրակացութեան, որ երբէք ոչ մի գիւղացիական բարենորոգում չէ եղել, որ ներշնչված լինի այնպիսի մաքուր զգացմունքով, աւելի լայն ծրագրով, ինչպիսին 1861 թւի բարենորոգումը, բայց և չէ եղել ոչ մի հողային բարենորոգում որ վերջացած լինի այդպիսի անաջողութեամբ։

Վերջում հռետորը յայտնում է, որ ալկօհօլիզմի ազդեցութեան տակ գուցէ գիւղացիական ընդարձակ մասսաները զրկվեն իրանց հողերից. օրինակ է բերում բաշկիրներին, որոնք ծախեցին իրանց հողերը։ Նա կարծում է, որ այդպիսի դէպքերի առաջը կարելի է առնել և հողային վարկի ամբողջ քաղաքականութիւնը պէտք է աջակցէ այդ երևոյթի վերացման (ծափահարութիւն)։

Ընդունվում է ճառերը տաս րոպէով սահմանափակելու առաջարկութիւնը։ Խօսելու են կրկին 16 հռետորներ։

Մարկով 2-ի և Տիմօշկինի խօսելուց յետոյ, որոնք նոյնպէս պաշտպանում են անհատական սեփականութիւնը, նախագահը ժամը 6 և 12 րոպէին նիստը փակված է յայտարարում։

Դուման յանձնում է նախագահին վաղը շնորհաւորական հեռագիր ուղարկել Թագաւոր Կայսրին Նրա անուանակոչութեան առիթով։ («Հ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Երէկ, շաբաթ, դեկտեմբերի 6-ին, Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի անուանակոչութեան օրը Ալէքսանդրո-Նեվսկի զինուորական տաճարում պատարագից յետոյ կայացաւ գոհաբանական մաղթանք, որի ժամանակ արսէնալից պարպեցին 21 թնդանոթ։ Պատարագին և մաղթանքին ներկայ էին Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վորօնցով-Դաշկով իր շքախմբով, նրա օգնականները, զինուորական և քաղաքացիական նահանգապետները, կովկասեան զօրաբանակի հրամանատարը, Անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչը, քաղաքագլուխը վարչութեան անդամների հետ, բոլոր զօրամասերի հրամանատարները և հասարակական ու զինուորական հիմնարկութիւնների և հաստատութիւնների ներկայացուցիչներ։ Մաղթանքը վերջանալուց յետոյ կոմս Վորօնցով-Դաշկովը ձիով, շրջապատված իր շքախմբով և գեներալիտէտով, անցաւ Գոլովինսկի պրօսպէկտով, ուր զօրահանդէսի համար երկշարք կանգնած էին կովկասեան զօրաբանակի զօրամասերը։ Հանդէսը տևեց մօտ կէս ժամ. նուագում էր զինուոր. նուագախումբը։ Զօրահանդէսը դիտելու համար պրօսպէկտի վրա ժողոված էր մեծ բազմութիւն։ Երեկոյեան, ժամը 5-ին, պալատում տեղի ունեցաւ զինուորական հացկերոյթ։ Նոյն օրը Կայսրի արևշատութեան համար մաղթանքներ կատարվեցին հայոց Վանքի աւագ եկեղեցում, կաթոլիկների և լիւթերականների եկեղեցիներում, հրէաների սինագօգում և մահմեդականների մզկիթում։ Քաղաքը առաւօտից զարդարված էր դրօշակներով։ Բացի ապարաններից ոչ մի տեղ այդ օրը աշխատանք չը կար։

✦ Վաղը, գիշերվայ գնացքով, Թիֆլիս կը հասնի Մեծ Իշխան Կոնստանդին Կոնստանտինովիչը։

✦ Ուրբաթ, դեկտեմբերի 5-ին, Բաթումից վերադարձաւ կոմսուհի Ելիզավետա Անդրէևնա Վորօնցովա-Դաշկովան։

✦ Պետերբուրգից «Кав.»-ին հեռագրում են, որ բարօն Նօլդէն գաղտնի խորհրդականի աստիճանից բարձրանում է իսկական գաղտնի խորհրդականի աստիճանի։

✦ Թիֆլիսում գիւղատնտեսական դասընթացքներ հաստատելու նախագիծը երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութիւնը համակրանքով է ընդունել, և դասընթացքների պահպանութեան համար իր միջոցներից յատկացրել է 3000 րուբլի։

✦ Ուրբաթ, դեկտ. 5-ին, երեկոյեան ժամը 7-ին, չորս անյայտ անձեր զանգահարում են Ալէքսանդրօվսկի փողոցում սեփական տուն ունեցող Ալ. Այվազեանի դրան զանգը։ Հէնց որ պ. Այվազեան գլուխը դուրս է հանում տնից, անյայտ անձերը քաշելով նրան և իսկոյն և եթ բերանը թաշկինակ սեղմելով, ուժով նստեցնում են դրան մօտ սպասող կառքի մէջ և փախցնում են։ Ոչ իր՝ Այվազեանի խուլ աղաղակները, ոչ անցորդ օգնութեան բացականչութիւնները ոչինչ չեն օգնում։ Չարագործները անյայտանում են իրանց զոհի հետ։ Ասում են, որ նրանք խոշոր փրկանքով միայն համաձայն են ազատ թողնելու գերվածին։

✦ Վաղը, Արտիստական ընկերութեան թատրոնում, ինչպէս յայտնի է, տեղի է ունենալու մեր բեմի լաւագոյն կին ոյժերից մէկի՝ տիկ. Մայսուրեանի բենեֆիսը։ Խաղացվելու են բոլորովին նոր պիէսներ։ Լիայոյս ենք, որ հայ հասարակութիւնը կը գնահատէ աշխատաւոր դերասանուհուն, որից ստացած հաճելի տպաւորութիւնների թիւը այնքան էլ փոքր չէ եղել։

✦ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կարգադրութեամբ, աշակերտութիւնը իրաւունք չունի շնորհաւորել Ակ. Ծերեթելուն թատրոնի բեմի վրա և ուղերձներ կարդալ, բայց կարող է մասնակցել գրական ցերեկոյթներին, որոնք կը տրվեն նրա յոբելեանի առիթով։

✦ Պ. Տիգրան Զաւէնը Կ. Պօլսից խնդրում է մեզ յայտնել, որ ինքը հեռացել է «Սուրհանդակ» թերթի խմբագրապետութիւնից։

✦ Յունվարի 6-ին խաչը ջուրը գցելու համար ռուսաց յորդանանը կը շինվի Ալէքսանդրեան այգու աւազանի վրա, ինչպէս անցեալ տարի էր։

✦ Կովկասագիտական բարձր դասընթացքների ծրագրից հանել են պրօֆ. Գրեդեսկուլի և Մինաս Բերբերեանի դասախօսութիւնները։

✦ «Մեղու» ընկերութեան անդամների ընդհանուր ժողովում որոշվել է Տ. Նազարեանի յոբելեանի առիթով մի սան պահել իր դպրոցում իր միջոցներով։ Սանը լինելու է Նազարեանի հայրենակից, այսինքն շուշեցի։

✦ Անդրկովկասեան երկաթուղիների զինուորական կառավարիչ գ.-մ. Նէյգէբաուէրը երէկ, Թագաւոր Կայսրի անուանակոչութեան տօնի առիթով, կարգադրեց բանտարկութիւնից ազատել անտոմսակ ճանապարհորդելու համար բանտվածներին և շատերին էլ նրանցից, որոնք ենթարկվել էին դրամական տուգանքի։

✦ «Գործականները» նորից կեղծարարութեան մի նոր ապացոյց տուին։ Բարօն Նօլդէի ճառի մէջ, որ տպվեց երէկ բոլոր լրագիրներում, կայ հետևեալ կտորը. «իսկ խաղաղ հայերը հանգիստ չունէին սպանութիւնների սպառնալիքների տակ ազգային «Դաշնակցութիւն» կուսակցութեան դրամաշորթութիւնից». (а мирные армяне терпѣли отъ вымогательства денегъ—отъ національной партіи «Дашнакцутюнъ» подъ угрозою убійствъ)։ Արդ, «Գործ» թերթը հետևեալ կերպով է թարգմանել այս կտորը. «երբ խաղաղ հայերը տուժում էին ազգային կուսակցութեան դրամական պահանջներից սպանութեան սպառնալիքով»։ Թէ ինչու է «Գործը» հանել «Դաշնակցութիւն» բառը և դրամաշորթութեան տեղ դրել դրամական պահանջ, շատ պարզ է։ Շատ ուշագրաւ է, թէ ինչ նպատակով է կատարվում այս սիստեմատիկ կեղծարարութիւնը։ Սա երկրորդ համանման դէպքն է։

✦ Բարեգործ մարդկանց ուշադրութիւնն ենք հրաւիրում այրի Սօֆիա Խաչատրեանցի խիստ ծանր ու թշուառ դրութեան վրա։ Յիշեալը իր երկու անչափահաս որբերով գտնվում է խիստ չքաւոր վիճակի մէջ։ Նրան օգնել ցանկացողները կարող են դիմել Մողնու եկեղեցու բակը, ուր և ապրում է յիշեալ այրին։

✦ Վաղվանից կը ձեռնարկվի վերստուգելու Թիֆլիսի քաղաքային վարչութեան սանիտարական մասը։

✦ Թիֆլիսի արքունական պալատի կառավարիչ Օստրովսկին դեկտ. 5-ին մեկնեց Թիֆլիսից գաւառական պետական գանձատան գործավարութիւնը ստուգելու համար։

✦ Այս տարվայ քաղաքային նախահաշւի մէջ նշանակված կայ լրացուցիչ 252,995 րուբլի, որի մեծ մասը գլխաւորապէս գնալու է Մուխրանեան կամուրջի կառուցման վրա։

✦ Այսօր, ցերեկվայ ժամը 11-ին, Ներսիսեան դպրոցի շինութեան մէջ տեղի կունենայ նոյն դպրոցի չքաւոր աշակերտների խնամատար մարմնի խորհրդակցութիւնը, որին կարող են ներկայ լինել և կողմնակի՝ նպատակը յարգող անձեր։

✦ Ինչպէս խօսվում է, նոր փոփոխութիւններ են մտցվելու Թիֆլիսի ոստիկանութեան կազմի մէջ։

✦ Թիֆլիսում բաժանում են ձրիաբար վրացերէն լեզուով «Ակակի Ծերեթելին և նրա ոտնաւորները» բրօշիւրը։

✦ Վաղը Թիֆլիսի նահանգական դատարանում քննվելու է «Н. З.» թերթի խմբագիր Գոտուայի գործը։

✦ Գորուց մեզ գրում են. «Գորու հայոց ծխական երկսեռ երկդասեան դպրոցի չքաւոր աշակերտ-աշակերտուհիների օգտին, դպրոցի աւագ-ուսուցիչ պ. Ղ. Դերենիկեանի ձեռնարկութեամբ, նոյն քաղաքի ժողովարանում տրվելու է ներկայացում հայոց և վրաց լեզուներով. ցանկալի է, որ Գորու հայ հասարակութիւնը իր կօպէկները չը խնայէ այս բարի գործի համար»։

ԼՈՒՐԵՐ ԳԱՆՁԱԿԻՑ

✦ Նոյեմբերի 30-ին ս. Յովհաննէս եկեղեցու գաւթում տեղի ունեցաւ փոխանորդի ընտրութեան ժողովը, որին ներկայ էին 39-ը պատուիրակների փոխարէն ընդամենը 18 հոգի, որի պատճառով ընտրութեան գործը յետաձգվեց դեկտեմբերի 21-ը. բացակայող պատուիրակները պատկանում էին գիւղական շրջաններին։ Իբրև թեկնածուներ խօսվում է Սիոն և Եփրեմ վարդապետների մասին։

✦ Նոյեմբերի 30-ին ս. Յովհ. եկեղեցում պատարագին առաջին անգամ երգեց Գանձակի ծխական դպրոցի ուսուցիչ Մ. Խաչիկեանի պատրաստած քառաձայն երգեցիկ խումբը։ Խումբը շատ էր պատրաստված և պակասաւոր էր։

✦ Թեմ. առաջնորդի մի գրութեան համաձայն՝ վերջերս հոգ. կառավարութիւնը արգելել է քահանայագործել Ա. ք. Շիրակունուն և Ե. ք. Զիրքինեանցին, իրանց մի քանի անպարտաճանաչութիւնների պատճառով։

Սարդաղէ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

✦ «Ռուս ժողովրդի միութեան» մէջ տեղեկութիւն է ստացված, որ Ցարսկոյէ Սէլօյում մօտ օրերս զեկուցում է կարդացվել, որ «ռուս ժողովրդի միութիւնը» իւրաքանչիւր անգամ բողոքելով կառավարութեան ձեռք առած միջոցների դէմ, ոչ միայն խախտում է օրէնքը և վարկաբեկում կառավարութեան անդամներին հասարակութեան աչքում, այլ և արգելք է հանդիսանում կառավարութեան աշխատանքներին։ Այդ զեկուցման հետևանքը «Утро»-ի ասելով եղել է այն, որ հրամայված է մանրամասնօրէն քննել «միութեան» գործունէութիւնը։

✦ Ղրիմի շրջանի քաղաքների մեծ մասը, ֆինանսական ճգնաժամի մէջ գտնվելով, դիմում է արտակարգ փոխառութիւնների քաղաքային տարրական կարիքները հոգալու համար։ Սեվաստոպոլը միջնորդում է մի միլիոն փոխառութիւն անելու մասին, Մելիտոպոլը, Բերդեանսկը, Թէոդոսիան և Ղարասուբազարը թոյլտուութիւն են խնդրում փոխառութեան համար գրաւ դնելու քաղաքապատկան հողերը։ Կերչը անցեալ տարի միայն փոխառութիւն է արել 400,000 րուբլի, այս տարի նախահաշիւը դարձեալ փակվում է խոշոր դեֆիցիտով։ («Слово»)

✦ Ներքին գործերի մինիստրը առաջարկել է Պետերբուրգի քաղաքագլխին մանրամասն բացատրութիւն ներկայացնել խոլերային համաճարակի տևողութեան պատճառների մասին Պետերբուրգի մէջ։ («Н. В.»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Իշխան Սումբատովը, «Դաւաճանութիւն» պիէսի հեղինակը, այս տարի մի նոր պիէս է գրել, որը պէտք է լոյս տեսնէ «Русская Мысль» ամսագրի նոյեմբերի համարում։ Պիէսի վերնագիրն է «Вожди» (Առաջնորդներ)։

Այդ պիէսը խաղացվեց Թիֆլիսի արտիստական թատրոնում ուրբաթ, դեկտեմբերի 5-ին։

Պիէսի նիւթն են կազմում ժամանակակից կեանքի դէմքեր և մի քանի հոսանքների արտացոլումներ։ Հանդէս են բերված բարձր շրջաններում ազդեցութիւն ունեցող անձնաւորութիւնների սալօնները։ Եւ ներկայացման հաւաքված հասարակութիւնը տալիս էր նոյնիսկ անուններ այս ու այն բարձրաստիճան անձի, որի գործունէութիւնից վերցված են որոշ գծեր և մտցրած հերոսների տիպիկական պատկերացման մէջ։

Պիէսի մէջ դուրս են բերված վարչական անձեր, լրագրական գործողներ, յեղափոխական տրամադրութեան ներկայացուցիչներ և կանացի ազդեցութիւնների լուսաբանութիւններ։

Մի շարք տեսարաններ շարժում են կենդանի հետաքրքրութիւն։ Մանաւանդ հետաքրքրաշարժ են երրորդ գործողութեան տեսարանները, նոյնպէս և հինգերորդ գործողութեան։

Եթէ պիէսի մէջ եղած ձգձգումները և երկարաբանութիւնները սղվէին, պիէսը կը ստանար աւելի մեծ յաջողութիւն։

Դերակատարներից աչքի էին ընկնում դերասանուհի Վասիլևկովան պիէսի հերոսուհի Մարինայի դերում, Բարատովը գլխաւոր հերոս Տեմերնիցկինի դերում և Զինովևը պատասխանատու խմբագիր Բուդիցկիի դերում։

Սիրող

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Թիֆլիս, 1 դեկտ.

Ձեր լրագրի 264 համարում հաղորդված էր, որ իբր թէ մի խումբ անձինք իմ ղեկավարութեամբ վճռել են հեռացնել պ. Կ. Խատիսեանին «Баку», «Бакинское Эхо» թերթերի խմբագրութիւնից և հրաւիրել նրա տեղ պ. Վերմիշեանին։

Շտապում եմ հաղորդել, որ այդ տեղեկութեան մէջ ճշմարտութեան նշոյլ անգամ չը կայ։ Մի կողմ թողնելով այն, որ ես իբրև մի անձն, որ չունի ոչ մի կապ «Баку» և «Бакинское Эхо» թերթերի հետ, ոչ մի իրաւունք չունեմ որևէ մէկին խմբագիր նշանակել կամ հեռացնել այդ պաշտօնից, իմ անձնական յարաբերութիւնները պ. Կ. Խատիսեանի հետ թէ իբրև մարդու և թէ իբրև լրագրական գործչի այն տեսակ են, որ եթէ նոյնիսկ ես իրաւունք էլ ունենայի լրագիրների վիճակը անօրինելու, իմ գլխով անգամ չէր անցնի այն միտքը, որը ինձ վերագրում է ձեր լրագիրը:

Բաղդասար Դօլուխանեան

Ծանօթ. Խմբ.—Հաճութեամբ տպագրելով վերոյիշեալ հերքումը, պարտք ենք համարում յայտնել, որ լուրը մեզ հաղորդուել էր Բագուից, մի արժանահաւատ անձից, որն, ինչպէս այժմ երևում է, սխալ տեղեկութիւն է ունեցել:

II

Թիֆլիս, 1 դեկտեմբերի

«Մշակի» № 264-ում «Մամուլ» բաժնի մէջ ի միջի այլոց զետեղուած են հետևեալ տողերը, որոնք վերաբերւում են ինձ:

«...Այժմ էլ տեղեկացնում են մեզ, որ Բագւում մի խումբ անձինք, Բ. Դօլուխանովի ղեկավարութեամբ, մտադիր են հեռացնել «Бак. Эхо.» և «Баку» թերթերի խմբագրութիւնից պ. Կ. Խատիսեանին և յանձնել այդ թերթերի հրատարակութիւնը և խմբագրութիւնը պ. Բ. Վերմիշեանին»:

Ձեռնպահ մնալով որևէ մեկնաբանութիւններից խնդրում եմ տեղ տալ ձեր լրագրում հետևեալ փաստացի տեղեկութիւններին.

1) «Баку» և «Бак. Эхо» լրագիրները մինչև այս տարվայ նոյեմբերի 18-ը Բագուի Հ. Կ. Միութեան սեփականութիւն էին կազմում: Այդ լրագիրները գտնվում էին Միութեան գլխաւոր բիւրոյի անօրինութեան տակ, որը Միութեան ընդհանուր ժողովից իրան տրված կատարեալ լիազօրութեամբ հանդիսանում էր իբրև գործի միակ տէր, ուստի և ինքը միայնակ ունէր իրաւունք թէ հրաւիրել այս կամ այն անձին այդ թերթերը ղեկավարելու համար և թէ հեռացնելու նրանց:

2) Քանի որ յարգելի պ. Բ. Դօլուխանեանը Միութեան գլխաւոր բիւրոյի անդամ չէ, ուստի նա ոչ մի առնչութիւն չունենալով վերոյիշեալ թերթերի հրատարակութեան հետ, ոչ ինքնուրոյն կերպով և ոչ էլ իբրև «ղեկավար մի խումբ անձերի» չէր կարող և չէ կարող, ի հարկէ, ոչ իրաւունք և ոչ էլ գիտաւորութիւն ունենալ ինձ հեռացնելու կամ պ. Վերմիշեանին հրաւիրելու:

3) Ինձ կամ լրագրական յանձնաժողովի միւս երկու անդամին «Баку» կամ «Б. Эхо»-ի խմբագրութիւններից հեռացնելու մասին ներկայումս ոչ մի խօսք անգամ չէ կարող լինել հէնց այդ շատ պարզ պատճառով, որ Բագուի Հ. Կ. Միութիւնը դեռ նոյեմբերի 18-ին իրան պատկանած ռուս լրագիրների իրաւունքը ծախել է պ. Վերմիշեանին: Այդ մասին հէնց նոյեմբերի 18-ին ես յայտնել եմ Բագուի քաղաքապետին, իսկ նոյեմբերի 19-ին հաղորդված է «Бак. Эхо»-ի մէջ:

4) Պ. Վերմիշեանին, որ վաղուց արդէն մտադրութիւն ունէր մեր լրագիրը գնել, լրագիրը վաճառելու առաջարկութիւնը արել եմ հէնց ես Խատիսեանս Միութեան գլխաւոր բիւրոյի նիստում նոյեմբերի 16-ին, և այդ իմ առաջարկութիւնը միաձայն ընդունվել է գլխաւոր բիւրոյի բոլոր անդամներից, որոնք և որոշել են «յանձնարարել պ. Խատիսեանին կատարել Միութեան պատկանող ռուս լրագիրների վաճառումը պ. Վերմիշեանին այն պայմաններով, որոնք նա՝ Խատիսեանը նպաստաւոր կը գտնի Միութեան համար»: Այս բոլորը հաղորդելով աւելացնում եմ, որ հարկ եղած դէպքում ամեն բոպէ պատրաստ եմ ներկայացնել համապատասխան արձանագրութիւնների պատճէնները, որոնք հաստատում են բոլոր վերևում գրվածների անվիճելի ճշմարտութիւնը:

Կոստանդին Խատիսեան

—

Ստավրոպոլ, 28 նոյեմբերի

Տեղիս հայ տիկինները տեղս հրատարակվող «Нашъ Край» օրաթերթում կարդալով «Մշակի» № 251-ից պ. Գ. Այվազեանի թարգմանած՝ Կիլիկայի կաթողիկոս Սահակ Խապայեանի կոչը, ամսիս 27-ին ժողովվելով Կանանց Բարեգ. Ընկերութեան նախագահուհի տ. Գ. Մ. Մուրադեանի տանը՝ վճռեցին 100 ր. անյապաղ փոխադրել «Մշակ» օրաթերթին՝ յանձնելու Հանգանակիչ Մասնաժողովին յօգուտ մեր քաջ և անվեհեր զէյթունցիներին:

Թող օրինակը վարակիչ լինի, թող մեր Հիւսիսային Կովկասի զանազան քաղաքների հայուհիները օրինակ առնեն իրանց ընկերուհիներից, որոնք գիտեն ոչ միայն երգերի մէջ գովաբանել զէյթունցիներին, այլ և մխիթարել նրանց հասած թշուառութեան ժամանակ իրանց կոպէկներով:

Ս. ք. Տէր-Յովհաննիսեանց

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԴԱՂՏԱԳՈՂԻ ՓԱՍՏԱԲԱՆ X-ԻՆ

Փողոցային թերթի բոլոր յատկութիւններով օժտված «Գործ» թերթը չէ կարողանում մի շաբաթ անգամ հանգիստ նստել և ինձ հայհոյելու, զրպարտելու հաճոյքից զրկվել: Բայց նա այդ անում է զանազան դաղտագողի X փաստաբանների բերանով, որոնք չեն յանդգնում, ի հարկէ, իրանց իսկական դէմքով հանդէս գալ, այլ ստիպված են թաքնվել դիմակների ներքոյ: Եւ ահա եզուիտական «Գործը» այդ դաղտագողի X-ի բերանով իբրև մի մեծ նորութիւն և նշանաւոր փաստ հաղորդում է (№ 72), որ իբր բժ. Բ. Նաւասարդեանը խոհեմութեամբ գերադասել է լռութիւնը և չէ պատասխանել իմ հրաւէրին՝ պատմել ճշմարտութիւնը այն հռչակաւոր բլոկի մասին, որ, իբր թէ, երևան հանեցին խուլիգանական «Խարազան» թերթը, խաֆիական «Հովիւը» և Աղանեանի «Հայրենիքը»: Եւ «արմատական» «Գործը» արդէն իր հովանաւորութեան ներքոյ է առել այդ խուլիգանական և կղերական թերթերը... Սրտառուչ համերաշխութիւն, որին ի հարկէ մենք չենք նախանձում...

Սակայն, վախելով մի գուցէ բժշկապետ Բ. Նաւասարդեանը յանկարծ վեր կենայ և պարզէ ճշմարտութիւնը և մի հարուածով քարուքանդ անէ ստութիւնների, զրպարտութիւնների, քսութիւնների, ժանդարմական խուզարկութիւնների այն մեծ շէնքը, որ «Գործ» թերթը կարծում է կառուցած լինել իմ դէմ «Հովիւ», «Խարազան» և «Հայրենիք» թերթերի ու դաղտագողի X-երի աջակցութեամբ, նա շտապում է կասկածի տակ դնել պ. Նաւասարդեանի չէզոքութիւնը: Տեսնում էք, ինձ մեղադրող Հ. Տէր-Աստուածատրեանի, «Հովիւ» և «Հայրենիք» թերթերի ասածները զուտ ճշմարտութիւններ են, իսկ Նաւասարդեանի վկայութիւնը —ոչ:

Բայց շտապել էք ուրախանալ, պարոնայք զրպարտիչներ: Բժշկապետ Բ. Նաւասարդեանը վաղուց ուղարկել է մեզ իր պատասխանը, բայց «Մշակի» նիւթերի շատութեան պատճառով անկարելի է եղել մինչև այսօր տպագրել: Շուտով նամակը կը տպագրվի, և ամենքը կը խոստովանեն, թէ որպիսի ստոր զրպարտիչներ էք ամենքդ: Եւ յատկապէս «գործականները», որոնք օրը ցերեկով խարդախում են նոյնիսկ պաշտօնական հեռագիրները, իսկ յանդգնում ուրիշներին կեղծարար անուանել: Հայ հասարակութիւնը վաղուց ճանաչում է ինձ և լաւ գիտէ՝ ովքեր են դաւադրութիւններ սարքողները:

Հ. Առաքելեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

5 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Սենատը որոշեց Պետերբուրգի պօլիտեխնիկական ինստիտուտի վերատեսուչ Գագարինին, պրօֆ. Ստանօվիչին, սրա օգնականներ Մատուսեվիչին և Ուստրուգօվին յանձնել դատարանին քրէական պատժ. 339-րդ և 341-րդ յօդուածներով:

Զինւորա-նահանգական դատարանը Կօվալէվսկիների գործի վերաբերութեամբ Գր. Կօվալէվսկուն մեղաւոր ճանաչեց և դատապարտեց երեք ամսով բանտարկութեան հաւպտվախտում, առանց զրկելու նրան ծառայական իրաւունքներից և արտօնութիւններից: Պետր Կօվալէնսկին արդարացաւ:

Մայրաքաղաքում մի օրում խօլերայով հիւանդացան 19, մեռան 2 հոգի:

Մի քանի նահանգներում ուժեղացված պահնորդական դրութիւնը երկարվում է կրկին մի տարով:

Նշանակվում է իսկական գաղտնի խորհրդական պետական խորհրդի անդամ ստատս-սեկրէտար բարօն Նօլդէն:

ԵԱՐՕՍԼԱՒ: Լիցէյի վերատեսուչ վերընտրվեց պրօֆէսօր Զուբինսկին:

ՐՕՍՏՕՎ Դ./Վ.: Վիճակում երևացել են զինված աւազակախմբեր, որոնք ահաբեկել են ազգաբնակութիւնը կողոպուտներով և սպանութիւններով: Շատ կալուածատէրեր և գիւղացիներ միջնորդում են թոյլ տալ զէնք կրելու: Շատ ժողովներում որոշումներ են կայացրել գիւղերը մասերի բաժանել գիշերային հերթապահութեան համար:

ԿԻԵՎ: Մարինսկի շաքարի գործարանում, Բալաշօվում, չորս զինված մարդիկ յարձակվեցին գրասենեակի վրա, սպանեցին երեք պահակների և դռնապանին, վիրաւորեցին մի ուրիշ պահակի և մի գիւղացու և յափշտակեցին 10,000 րուբլի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Բագու, Ռուբէն Յակոբեանին: Ձեր ուղարկած յայտարարութիւնը պարզ չէ. գրեցէք՝ ինչ էք կամենում յայտարարել:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Պուշկինի, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:

Մ. Փ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հիւ.:

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻՉ—$1^1/_2$—2 ժ. մանկաբարձութեան:

Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—$12^1/_2$ ժ. կանանց և մանկաբարձութեան:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—$6^1/_2$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

Վճարը 50 կ.: Զքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
Ներքին հիւանդութիւններ

Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ.
5—6 ժ. երեկ.

Վելիամինօվսկայա փող., № 10.
(օ. մ.) 100—25

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ:

Հիւանդների ընդունելութիւնը { 12—1 առաւօտեան
5—6 երեկոյեան

Միքայէլեան փող., № 36, տ. Ճավճանիձէի:
100—69

ԲԺԻՇԿ
Ա. Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ

Ներքին եւ ջղային հիւանդութիւններ, առանձնապէս սրտի և թոքերի հիւանդութիւններ: Ընդունելութիւնը՝ 11—1 ժ. առաւօտեան, 5—6 ժ. երեկոյեան:

Սօլօլակսկայա փ. № 6. տ. Միրզօյեվի
(օ. մ.) 50—11

ԲԺԻՇԿ
Գ. Ե. Խօջափարուեան

Օդեսսայի համալսարանի կլինիկայի նախկին ասիստենտ. փոխադրվել է Թիֆլիս: Մասնագիտութիւնը՝ սիֆիլիս, միզասեռական և կաշուի հիւանդութիւններ: Ընդունելութիւնը՝ առաւօտեան ժամը 9—11 և 5—$7^1/_2$ երեկոյեան: Կանանց և երեխաների համար— ժամը 11-ից մինչև 12-ը ցերեկվայ: Սօլօլակ, Բէբուտօվսկայա փ. № 29, սեփ. տ.
(օ. մ.) 25—3

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ
պատգամաւորների
խմբանկարը
(1908 թ. նոյեմբերի 1-ին)
Աւտոտիպ ՊՕՍՏ-ԿԱՐՏ
100 հատը 2 ր. 50 կ., հատը՝ 5 կօպ.
Դիմել՝ Фото-цинког. С. Сэгомоняна, Базарная 20, Тифлисъ.
(ե. հ. կ.) 5—1

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է բերանի և ատամի հիւանդութիւններ ունեցողներին: Շինում է ոսկու, արծաթեայ, փարփօրի և այլ տեսակ պլօմբներ: Արհեստական ատամներ ոսկու և կաուչուկի վրա: Կաբինետին կից արհեստական ատամների լաբօրատօրիա: Խորհուրդը ձրի:

Ընդունելութիւն } 9—2 ժ. առաւօտեան
4—7 ժ. երեկոյեան

Шелковниковская ул., № 8, ոչ հեռու Արաս-Արաքսկայա հրապարակից:
(շ. կ. չ.) 25—10

Մեդիցինայի բէլդշէր-մասսաժիստ
Յ. Գ. Եսայեան

Կաշուի տակ սրսկում է բժիշկների նշանակած դեղեր, օր. մկնդեղ՝ ուժասպառութեան և սակաւարիւնութեան դէմ, և այլն: Խնամում և փաթաթում է վէրքեր: Սեռական անկարողութեան, թուլութեան և ընդհանուր ջղայնութեան դէմ անում է համապատասխան սառնաղի շփումներ, տրորումներ ամբողջ մարմնի: Ընդհանուր և տեղական մասսաժ: Մասնագիտական մասսաժ փորկապութեան, չաղութեան, նիհարման, ջղայնութեան, սեռական թուլութեան և այլ հիւանդութիւնների դէմ: Բժշկական ու շվէդական գիմնաստիկա կազդուրվելու համար: Ընդունում է հրաւէրներ հիւանդների մօտ: Զքաւորներին մեծ զիջողութեամբ: Ժամանակաւոր հասցէն՝ պօստի մօտ, Բարօնսկայա փող. № 15: Ընդունելութիւնը՝ կանանց 3—4. ժ., տղամարդկանց՝ 4—5 ժ.:
(օ. մ.) 50—3

ՀՐԱՒԷՐ

Առաջիկայ կիրակի, դեկտեմբերի 7-ին, Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցում, ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին լինելու է ծխական ժողովը՝ նախկին ժողովներից մնացած քննելի և վերջին ժողովում առաջարկված նոր խնդիրներով զբաղվելու:

Զբաղման խնդիրներն են.

1) Քահանաների բողոքը.
2) Եկեղեցու բարեզարդութիւնը.
3) Եկեղեցական և դպրոցական կալուածների նորոգութեան և շինութեան գործը.
4) Դպրոցի և հոգաբարձուների մասին խորհրդակցութիւն.
5) Դպրոցական և եկեղեցական ծախսերի տարեկան նախահաշիւներ կազմելու խնդիրը.
6) Կուկիայի հանգստարանի երկու հոգաբարձուների ընտրութիւնը:

Խնդրում եմ Թանդոյեան եկեղեցու 25 և աւելի տարիքաւոր արական սեռի իրաւատէր ծխականներին շնորհ բերել մասնակցելու ժողովի զբաղմունքներին:

Նախագահ ժողովի՝
Յարութիւն քահ. Ծուղուրեան
(ու. շ. կ.) 3—3

Գիմնազիայի VII դասարանի
ՄԻ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ
կը կամենար օրական երկու ժամ պարապմունք ունենալ հայ ընտանիքներում փոխարէնը սենեակ կամ ճաշ ունենալու պայմանով:

Կարող է պարապել 1—2 երեխաների հետ կամ պատրաստել աշակերտուհիներ գիմնազիայի ստորին դասարանների համար:

Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը:
(ե. ու. կ.) 3—3

ԴԵՐԲԵՆՏՈՒՄ, քաղաքի կենտրոնում վաճառվում է **ԵՐԿՅԱՐԿԱՆԻ ՄԻ ՏՈՒՆ՝** նկուղով, 360 քառ. սաժէն տարածութիւն ունեցող հողի վրա, երեք կողմից խիտ անցուդարձ ունեցող փողոցներով:

Նոյնպէս վաճառվում է քաղաքից հինգ վերստ հեռաւորութեան վրա գտնվող ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻ, հերթական բաժին ունեցող ջրով, ութ դեսեատին տարածութեամբ, քարաշէն երկյարկանի տնով և ջրհորով:

Այդ կալուածքները պատկանում են հանգուցեալ Եկատերինա Մելիք-Շահնազարեան դէ-Շապուրին:

Գնել ցանկացողները կարող են դիմել կտակակատարներին Դերբենտում—Կարապետ Ա. Օրբելովին և Յովհաննէս Գ. Իսաղուլեանցին:
(կ.) 9—6

ЕДИНСТВ
ПРЕДСТАВ.
И. ШТРУМФЕЛЬДЪ
ВАРШАВА
ЧАСЫ ПАТЕНТЪ
1вый СОРТЪ

Ի՞ՆՉ ԲԱՆ Է ԱՆԿԵՐԸ

Անկէրը—դա այն մեխանիզմն է, որը համարվում է ամենալաւը ժամացոյցների կազմուածքի մէջ: Հետևաբար գործարանը նախազգուշացնում է այն ամենքին, որոնք կամենում են լաւ ժամացոյց ունենալ, պատուիրել բացառապէս մեր ներկայացուցչին: Մեր առաջարկած ժամացոյցը սև պողպատից է, մեխանիզմը «ԱՆԿԷՐ», լարելը 36 ժամը մէկ անգամ, առանց բանալիի: Այդ ժամացոյցը նման է հին ժամանակների խրօնօմետրին, որը ներկայումս էլ գնահատվում է 10 ր.: Գործարանը հնարաւորութիւն է գտել առաջարկել ամենքին այդ առաջնակարգ և գեղեցիկ ժամացոյցը 2 ր. 75 կոպէկով. 2 հատը—5 ր.: Ամեն մի ժամացոյցը ապահովված է 6 տարվայ երաշխաւորութեամբ: Ծանապարհածախքը 1—4 ժամացոյցի համար 40 կ., Սիբիր՝ 75 կ.: Ուղարկումը վերադիր վճարով և առանց կանխավճարի: Նորաձև ոսկուց կարճ շղթայ [illegible] 75 կ. և 1 ր. 50 կ.: Նոյն տեսակ երկար շղթայ 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.: Հասցէագրել՝ Т-во «З А Р Я», Варшава.
(6, 9, 16, 23, 30, 7) 55238 6—6

„ՊՐՕՎՕԴՆԻԿ“
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՌԻԳԱՅՈՒՄ
1888

Անդրկովկասեան ֆաբրիկային պահեստ Թիֆլիսում
Սօլօլակսկայա փող., № 4.

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ՝
ԼԻՆՕԼԷՈՄ մեծ քանակով, միագոյն և նկարներով.
ԱՍԲԷՍՏԻ ԿԱՐՏՕՆ.
ԱՍԲԷՍՏԻ և ՏԱԼԿԻ ՆԱԽՇԵՐ.

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ» ԼԻՆՕԼԷՈՒՄ միջանցուկ նկարներով, որոնք չեն ձևափոխվում մինչև լինօլէումի վերջնական մաշվելը:

ԼԻՆԿՐՈՒՍՏԱ (յաւիտենական պաստառներ) ռելիեֆ նկարներով զարմանալի իրանց շքեղութեամբ և մեծ խնայողութեամբ:

ՀԱՏԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ աշխարհի ամենալաւ կրկնակօշիկների ՊՐՕՎՕԴՆԻԿ

(№ 1) 25—5

Электропечатня Н. Г. Аганьянцъ Полицейская. 7.